ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հարգելի Հաճախորդ,

Մենք հոգ ենք տանում Ձեր վերաբերյալ տեղեկատվության գաղտնիության պահպանման մասին և իրականացնում ենք միջոցառումներ՝ ուղղված Ձեր կողմից մեզ տրամադրված անձնական կամ ֆինանսական տվյալների գաղտնիության և անվտանգության ապահովման նպատակով:

1 Տեղեկատվության հավաքագրում

Ինչպիսի՞ տեղեկատվություն ենք մենք հավաքագրում

ՖԻՆՔԱ-ն իր ծառայությունները պատշաճ կերպով հաճախորդներին մատուցելու համար, կախված գործառույթի և գործարքի բնույթից և բովանդակությունից, իր հավանական և գործող հաճախորդներից (այսուհետ՝ Հաճախորդ) հավաքագրում է, իսկ գործարքի ժամանակ կամ գործարար հարաբերությունների ողջ ընթացքում մշտապես թարմացնում է հետևյալ տեղեկատվությունը.

- Հաճախորդի անձը նույնականացնելու համար անհրաժեշտ տվյալներ
- Հաճախորդի գտնվելու կամ հաշվառման (փաստացի բնակության) վայրը
- Հաճախորդի կապի և հաղորդակցման միջոցների վերաբերյալ տվյալներ
- Հաճախորդի կրթության, գործունեության և զբաղվածության վերաբերյալ տվյալներ
- Հաճախորդի վարկային պատմության վերաբերյալ տվյալներ
- Այլ պաշտոնական տեղեկատվական կենտրոններից ստացվող տվյալներ
- Հաճախորդի վերաբերյալ հանրամատչելի աղբյուրներից ստացվող տվյալներ
- Այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են հաճախորդի վարկունակությունը գնահատելու համար:

Մենք երաշխավորում ենք, որ Ձեր վերաբերյալ տեղեկությունները ձեռք են բերվում բացառապես օրինական ճանապարհով:

Մենք պահանջում ենք միայն այնպիսի տեղեկություններ, որոնք առնչվում են նախանշված գործարքի կամ գործառույթի հետ, և որոնց հավաքագրումը պահանջվում է օրենսդրությամբ:

Որոշ տեղեկությունների հավաստիությունը երաշխավորելու նպատակով ՖԻՆՔԱ-ն կարող է պահանջել հիմնավորող փաստաթղթերի բնօրինակներ կամ պատճեններ:

Ձեր տրամադրած տեղեկատվությունը

Դուք պարտավորվում եք ՖԻՆՔԱ-ին տրամադրել ամբողջական, արժանահավատ, ճշգրիտ և հնարավորինս թարմացված տեղեկություններ, երբ

- Այցելում եք ՖԻՆՔԱ-ի գրասենյակ և ցանկանում եք դառնալ ՖԻՆՔԱ-ի հաճախորդ,
- Հանդիսանում եք ՖԻՆՔԱ-ի հաճախորդ,
- Ցանկանում եք կնքել մեկանգամյա գործարք:

2 Ինչպես ենք մենք օգտագործում հավաքագրված տեղեկատվությունը

ՖԻՆՔԱ-ն հաճախորդի վերաբերյալ հավաքագրված տեղեկություններն օգտագործում է բացառապես նախօրոք որոշված նպատակին հասնելու համար, այդ թվում՝

- Ձեր հայցած ծառայությունների մատուցում
- Մեր ծառայությունների և սպասարկման որակի գնահատում և բարելավում
- Հարցումներ և գովազդ՝ Ձեր կողմից ստացված համաձայնության դեպքում

Ձեր կողմից մեզ տրամադրված տեղեկությունները տրամադրվում են երրորդ կողմի Ձեր գրավոր համաձայնությամբ և օրենքով նախատեսված դեպքերում:

3 Ինչպես ենք մենք պաշտպանում հավաքագրված տեղեկատվությունը

ՖԻՆՔԱ–ն պաշտպանում է Ձեր մասին հավաքագրված տվյալները՝ ներդնելով համապատասխան ներքին կանոնակարգեր և հետևելով դրանց կատարմանը, ինչպես նաև օգտագործելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, որոնք անձեռնմխելի են դարձնում Ձեր տվյալները: